



Համաշխարհային տնտեսական ֆորումը հրապարակել է «Աշխարհում գենդերային հավասարության վարկանիշային աղյուսակ-2012» (The Global Gender Gap Report 2012) ամենամյա զեկույցը: Հայաստանը ցուցակի 92-րդ տեղում է անցյալ տարվա համեմատությամբ մահանջելով ութ կետով: Հետազոտության մեջ ներառված է 135 երկրի (որտեղ ապրում է մոլորակի բնակչության 90 տոկոսը) վերաբերյալ տեղեկատվություն: Արդյունքները հիմնված են չորս հիմնական ոլորտներում (տնտեսություն, քաղաքականություն, առողջապահություն, կրթություն) կանանց և տղամարդկանց ներգրավվածության վերաբերյալ ցուցանիշների վրա:

Գենդերային հավասարության վարկանիշը գլխավորում է Իսլանդիան: Առաջին տասնյակում են՝ Ֆինլանդիան, Նորվեգիան, Շվեդիան, Իռլանդիան, Նոր Զելանդիան, Դանիան, Ֆիլիպինները, Նիկարագուան, Շվեյցարիան:

ԱՊՀ անդամներից Ռուսաստանը հանգրվանել է 59-րդ հորիզոնականում, Ուկրաինան՝ 64-րդ, հարևան Վրաստանը, որն այլևս ԱՊՀ անդամ չէ, 85-րդ տեղում է, Տաջիկստանը՝ 96-րդում, Ադրբեյջանը՝ 99-րդում է, մյուս հարևանը՝ Թուրքիան, 124-րդ տեղում է:

Կանայք և իշխանությունը



Միջխորհրդարանական միության 2012-ի տվյալներով՝ աշխարհի 189 խորհրդարաններում խոսնակի պաշտոն զբաղեցնող կանանց թիվը չի գերազանցում 15,1 տոկոսը:

Պետությունների ղեկավար են 8 կին (5,3%), կառավարության ղեկավար՝ 14 կին (7,3%):

Ողջ աշխարհում նախարարի պաշտոն է զբաղեցնում 1065 կին:

Նշենք, որ 20-րդ դարի պատմության մեջ 52 կին է եղել երկրի ղեկավար: 18-րդ դարում՝ 12 կին թագուհի է եղել, 19-րդ դարում՝ ընդամենը 5-ը:


ԱՄՆ Կոնգրեսի յուրաքանչյուր 5-րդ անդամը կին է



Նոյեմբերի 6-ին ԱՄՆ-ում նախագահական ընտրապայքարին զուգահեռ անցկացվեցին նաև Կոնգրեսի վերին և ստորին պալատների ընտրություններ: Այդ ընտրությունների արդյունքում ձևավորված ԱՄՆ 113-րդ Կոնգրեսը կին պատգամավորների թվով ռեկորդ է սահմանել: Կին սենատորների թիվը, նախկին 17-ի փոխարեն, հասել է 20-ի: Ըստ այդմ՝ 2013 թ. հունվարից սկսած՝ Կոնգրեսի յուրաքանչյուր 5-րդ անդամը կին է լինելու:

Այն փաստը, որ Կոնգրեսի վերին պալատում՝ Սենատում, 100 սենատորներից 20-ը կին են լինելու, իրոք հատկապես կան է, քանի որ 1789-ից սկսած Սենատում ընդամենը 39 կին է ներկայացված եղել:

Կինը և քաղաքականությունը



Անվճար հավելված

www.WomenNet.am

2012 դեկտեմբեր



Եթե ես փոքր լինեի...

Ավելի քան երկու հազար ամերիկացի 7-15 տարեկան երեխաների վերջերս անցկացված հետազոտության ժամանակ հարցրել են. «Եթե առավոտյան արթնանայիր և հայտնաբերեիր, որ քո սեռը փոխվել է հակառակ սեռի, ի՞նչը կփոխվեր քո կյանքում»: Թե՛ տղաների և թե՛ աղջիկների պատասխանները ապշեցրեցին հետազոտողներին կանանց ընդունակությունների նկատմամբ նվաստացուցիչ վերաբերմունքով. «Եթե աղջիկ լինեի, ստիպված կլինեի հիմար և թույլ դառնալ», «Եթե տղա լինեի, կկարողանայի նախագահ դառնալ»...

Ով գիտի, զուցե այն ժամանակ, երբ լուսանկարում պատկերված այս աղջնակը մեծանա, Հայաստանում կին նախագահ լինի: Սակայն որպեսզի դա ինչ-որ ժամանակ տեղի ունենա, կանայք արդեն այսօր պետք է հայտարարեն երկրի գլխավոր պաշտոնի մասին իրենց հավակնությունները...

Կինը՝ Հայաստանի նախագահ. հնարավոր է արդյոք

Այսօր քաղտեխնոլոգները, սոցիոլոգները և մյուս մասնագետները միաձայն պնդում են, որ կանանց մասնակցությունը զալիք նախագահական ընտրաշաղկին շատ ցանկալի կլինեի, սակայն ընտրվելու շանսեր նրանք գրեթե չունեն...

Հայաստանի անկախության քսանից ավելի տարիների ընթացքում ոչ մի կին որպես նախագահի թեկնածու չի առաջադրվել... Հայ կանայք իրենց քաղաքական հավակնություններում ավելի քան զգուշավոր են, և մինչ այժմ նախագահական ընտրություններում մասնակցելու իր մտադրության մասին հայտարարել էր միայն 1998-ին սոցիոլոգիայի դոկտոր, պրոֆեսոր Լյուդմիլա Չարությունյանը: Սակայն նախագահի թեկնածու նա այդպես էլ չդարձավ՝ նախանշելով առանց որևէ բացատրության թեկնածուների գրանցման փուլում:

Հավանաբար, նա չէր կարող բավարարվել «կարևորը ոչ թե հաղթանակը, այլ մասնակցությունն է» սկզբունքով: Նույն կերպ են նաև մտածում բազմաթիվ այլ կանայք, ովքեր ոչ կրթության մակարդակով, ոչ ինտելեկտով, ոչ քաղաքական և մասնագիտական փորձով բացարձակ չեն զիջում և նույնիսկ զգալիորեն գերազանցում են այն տղամարդկանց, որոնք հարթելու ոչ մի հնարավորություն չունենալով՝ այնուամենայնիվ առաջադրվում են՝ քաղաքական կապիտալ վաստակելու ակնկալիքով:

2013-ի նախագահական ընտրությունները այս առումով բացառություն չեն, այնպես որ երկիրը ղեկավարելու ցանկացողների պակաս դժվար թե նկատվի: Բնականաբար, առաջին շարքերում կլինեն տղամարդիկ: Սակայն այս անգամ հնարավոր թեկնածուների շարքում հիշատակվում են նաև կանանց անուններ:

Այս պահին որպես ՀՀ նախագահի պոտենցիալ թեկնածու երեք կնոջ անուն է շրջանառվում. «Ազատ դեմոկրատներ» կուսակցության փոխնախագահ Անուշ Սեդրակյան, Մամուլի ազգային ակումբի նախագահ Նարինե Սկրտչյան և գործա-

րար Սիլվա Համբարձումյան, ով հասարակությանը հայտնի դարձավ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի հետ «Մարիոթ-Արմենիա» հյուրանոցում տեղի ունեցած տխրահեշակ միջադեպից հետո...

Ժամանակը ցույց կտա, թե այս կանանցից ո՞վ կհամարձակվի իրացնել իր մտադրությունը: Համեմատելով դեպք, նրանք դժվար որոշման առջև են կանգնած, քանի որ կին քաղաքական գործիչների նկատմամբ «անվստահության կանխավարկած» հաշվի առնելով՝ հասարակությունը նրանց խոշորացույցով կնայի: Բացի այդ, եթե բավարար քաղաքական կապիտալ չունեցող տղամարդկանց ներքում են իրենց չիմնավորված նախագահական հավակնությունները, և ոչ ոքի մտքով չի անցնում քննադատել նրանց սեռային պատկանելության տեսանկյունից, ապա կանանց դեպքում ամեն ինչ շատ ավելի բարդ է: Կանայք, որպես կանոն, պատասխանատվություն են կրում ոչ միայն իրենց, այլև ամբողջ սեռի համար, ընդ որում, իշխանության բոլոր մակարդակներում, սկսած տեղականից:

Այնուամենայնիվ, ինչպիսի՞ն է հասարակական կարծիքը Հայաստանում կին նախագահ ունենալու վերաբերյալ: Վերջին տարիներին անցկացված գրեթե բոլոր հարցումները, որոնցում շոշափվել է այս խնդիրը, ցույց են տալիս 30%-ից ոչ ավելի հարցվածների, ովքեր հնարավոր են համարում, որ Հայաստանում կին նախագահ լինի: Մնացածների համար դա անհնար է թվում՝ հիմնականում երկու պատճառով. նախ՝ հասարակությունը դրան պատրաստ չէ, և երկրորդ՝ պատրաստ չեն և բավարար քաղաքական կշիռ չունեն նաև հենց իրենք՝ կանայք: Քաղաքական փորձի մասով նշենք, որ այն բնավ չէր խանգարի նաև քաղաքական մեծ ամբիցիաներ ունեցող շատ ու շատ տղամարդկանց: Իսկ ինչ վերաբերում է հասարակության պատրաստ լինելուն, ապա հասարակական կարծիքը մշտական կատեգորիա չէ:

1936-ին, երբ Զ. Գելպիդ առաջին անգամ ԱՄՆ-ում հարցում անցկացրեց՝ «կըվտարկե՞ն արդյոք ընտրողները նախագահի պաշտոնին հավակնող կին թեկնածուի օգտին, եթե նա համապատասխան որակավորում ունենա», 65%-ը բացասական պատասխան էր տվել: 2008-ին ամերիկացիների գերակշիռ մասը՝ 80-90%-ը, ներառյալ տղամարդիկ, հայտարարել էին, որ իրենք պատրաստ են աջակցելու երկրի նախագահի պաշտոնում կին թեկնածուին: Ուրիշ հարց է, որ 2008-ի ԱՄՆ-ի ընտրություններում գենդերային կարծրատիպն ավելի ուժեղ գտնվեց, քան ռասայականը: Կարևորը այսօր ԱՄՆ բնակիչների մեծ մասը համարում է, որ իրենց երկիրը կարող է կին նախագահ կառավարել, և միայն 7%-ը, ըստ հարցումների, համոզված է, որ կինը երբեք չի դառնա երկրի ղեկավար:

Վերջին տարեկան տարիներին այս գաղափարը դադարել է արտառոց թվալուց ոչ միայն ԱՄՆ-ում: Ի դեպ, նաև Հայաստանում, որտեղ հասարակական կարծիքը, թեև շատ դանդաղ, սակայն փոխվում է: Եթե մի քանի տարի առաջ նախագահի պաշտոնում կնոջը տեսնում էր հարցվածների միայն 25%-ը, ապա 2011-ի հարցումների տվյալներով՝ նրանց թիվն աճել է մինչև 30%: Դրա հետ մեկտեղ, այդ պաշտոնին համապատասխանող կանանց մի քանի անուններ թվարկելու խնդրանքին հարցվածների մեծ մասը դժվարանում է արձագանքել: Պատճառն ակնհայտ է՝ իշխանության բոլոր մակարդակներում կանանց թերի ներկայացվածությունը և որպես հետևանք՝ հրապարակայնության պակասը:

Որքան էլ տարօրինակ է, սակայն ամբողջ հույսը ազգային մտածելակերպն է, սակայն ոչ այն իմաստով, ինչպես սովորաբար դրա մասին հիշում են. «Այդ ինչն՝ Մարգարետը, Անգելան կամ Հիլարին կարող են կառավարել, իսկ մեր Ա-նահիտները՝ ոչ»...

Թեմայի շարունակությունը՝ էջ 3

Անուն

Լրագրողական մրցույթ Նա/Նե-2012

Բրիտանական խորհուրդը, Երևանում Բրիտանական դեսպանատունը, ԵԱՀԿ երևանյան գրասենյակը, ԱՄԿ-ի Բնակչության հիմնարկում և «Վորլդ Վիժնի» հայաստանյան գրասենյակը հայտարարում են Նա/Նե լրագրողական աշխատանքների 5-րդ հորելյանական մրցույթը:

Մրցույթը կազմակերպվում է Օքսֆամ հայաստանյան մասնաճյուղի, Եվրոպական Միության, Հանրային լրագրության ակումբի, Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտի և Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի հետ համատեղ:

Հայտերը հարկավոր է ներկայացնել մինչև 2013 թ. հունվարի 13-ը: Արդյունքները կամփոփվեն հունվարի վերջին և կներկայացվեն Նա/Նե մրցանակաբաշխության ժամանակ 2013-ի փետրվարին:

Մրցույթի վերաբերյալ նորություններին ծանոթացե՛ք Բրիտանական խորհրդի facebook.com/british-councilarmenia:



Կան խորհրդի facebook.com/british-councilarmenia:

Թվեր ու փաստեր

Կին փոխնախարարների թիվը ավելացավ ևս մեկով

Օրերս հայտնի դարձավ, որ Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի որոշմամբ՝ Շամամ (Սոնա) Հարությունյանը նշանակվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ: Սոնա Հարությունյանը մինչ այդ զբաղեցրել է «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետի պաշտոնը: Մասնագիտությամբ տնտեսագետ է (աշխատանքի էկոնոմիկա): Սոցիալական ծառայության համակարգում աշխատում է 1993 թվականից: Այսպիսով, դեկտեմբերի 6-ից կառավարության կազմում այժմ աշխատելու են 6 կին փոխնախարարներ: Մինչ այժմ 61 փոխնախարարներից կանայք 5-ն են՝ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար Ջեմմա Բաղդասարյանը, Էկոնոմիկայի փոխնախարար Կարինե Մինասյանը, կրթության և գիտության փոխնախարար Կարինե Հարությունյանը, մշակույթի փոխնախարար Արև Սամուելյանը և քաղաքաշինության փոխնախարար Ռուզան Ալավերդյանը:


Հիշեցնենք, որ ՀՀ կառավարությունում 18 նախարարներից միայն 2-ն են կին՝ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը և մշակույթի նախարար Հասմիր Պողոսյանը: Հայաստանի 10 մարզերի մարզպետներից ոչ մեկը կին չէ, 24 փոխմարզպետներից միայն Արմավիրում է կին փոխմարզպետ՝ Լարիսա Մուրադյանը:

Մի խոսքով՝ իրական իշխանությունը և կանայք նախկինի պես գոյություն ունեն ըստ էության չհատվող հարթություններում:

Նշենք, որ 2000-ին Հազարամյակի զարգացման նպատակների (ՀՁՆ) շրջանակում Հայաստանի կառավարության կողմից ստանձնած պարտավորություններով՝ կանանց մասնաբաժինը Աժ պատգամավորների, նախարարների, փոխնախարարների և մարզպետների ընդհանուր թվաքանակում պետք է մինչև 2015 թ. առնվազն 25% լինի, սակայն 2010-ին այս ցուցանիշը գնահատվում էր միայն 7%-ի չափով, իսկ 2012-ին 10 տոկոս է դարձել: Ընդ որում, շարժը հիմնականում տեղի է ունեցել այս տարվա խորհրդարանական ընտրությունների արդյունքում Աժ-ում կանանց թվի մի փոքր ավելացման շնորհիվ:

Ի դեպ

Հայաստանյան պատվիրակությունում գեներալային հավասարություն է



ԵՆԽՎ թիվ 1898 բանաձևում հիշեցվում է այն մասին, որ կանայք կազմում են Վեհաժողովի անդամների ընդամենը 31%-ը և թերի են ներկայացված նրա կառույցների բոլոր պատասխանատու պաշտոններում:

Այս առիթով Վեհաժողովը կոչ է անում իր քաղաքական խմբերին միջոցներ ձեռնարկել համընթացումներում և այլ կառույցներում կանանց մասնակցությունը մինչև 40% բարձրացնելու ուղղությամբ: Մինևույն ժամանակ հիշեցնում է իր թիվ 1781 (2010) բանաձևի մասին, որը վերաբերում է կանանց թերի ներկայացվածությանը: Վեհաժողովի ազգային պատվիրակություններում՝ կոչ անելով բացատրական աշխատանքներ տանել կանանց ավելի քան 30 տոկոս մասնակցություն ապահովելու համար:

Նշենք, որ ԵՆԽՎ-ում հայաստանյան պատվիրակությունում այս խնդիրը լուծված է: Նրա կազմում ապահովված է գեներալային հավասարակշռությունը: պատվիրակության ութ անդամներից չորսը կին են՝ Նաիրա Զիրարյան (ԲՀԿ), Արփինե Հովհաննիսյան (ՀՀԿ), Նաիրա Կարապետյան (ՀՀԿ), Զարուհի Փոստանջյան («ժառանգություն»):



ԵՆԽՎ նոր բանաձևեր. կանանց առաջխաղացման համար պարասխանաբու են կուսակցությունները



Հոկտեմբերին կայացած Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) աշխատանքի ընթացքում ընդունվեց մի բանաձև, որը հայաստանյան պատվիրակության համար աննկատ անցավ: Խոսքը «Քաղաքական կուսակցությունները և կանանց քաղաքական ներկայացվածությունը» թիվ 1898 բանաձևի մասին է: Մեր պատվիրակները չմասնակցեցին նրա քննարկմանը, սակայն դրա մեջ շարադրված հանձնարարականներն ուղղակիորեն վերաբերում են այն երկրներին, որոնց խորհրդարաններում կանանց ներկայացվածությունը 20%-ից ցածր է: Հիշեցնենք, որ Հայաստանի Ազգային ժողովում այսօր կանայք ընդամենը 10,7% են, կնշանակի՝ մեր քաղաքական ուժերը պետք է ուշադրություն դարձնեն Եվրոպական հանձնարարականներին:

ԵՆԽՎ-ն բավական հետևողական է Եվրոպայի խորհրդի անդամ երկրների խորհրդարաններում կանանց ներկայացվածության առումով: Ինչպես հայտնի է, երկու տարի առաջ ընդունվեց մեկ այլ բանաձև և, ըստ էության, նույն թեմայով: Խոսքը «Ընտրակարգերը որպես քաղաքական կյանքում կանանց ներկայացվածության բարձրացման գործիք» թիվ 1706 (2010) բանաձևի մասին է: Դրանով ԵՆԽՎ անդամ երկրներում առաջարկվում էր կտրուկ բարձրացնել կանանց ներկայացվածությունը քաղաքա-

յան մասին է՝ ոչ միայն կուսակցություններում կանանց ներգրավելու և նրանց քաղաքական աճին և առաջընթացին նպաստելու, այլև օրենսդիր մարմնում և ամբողջ հասարակությունում գեներալային հավասարակշռության ապահովման առումով:

Վեհաժողովը առաջարկեց կազմակերպել այս խնդրին նվիրված սեմինար այն անդամ երկրների խորհրդարաններում, որտեղ կանանց ներկայացվածությունը չի անցնում 10%-ը:

Ձեկույցը նախապատրաստել էր ռուսիացի խորհրդարանական Մարիա Ստավրոսիտուն (լուսակցություն): Փաստաթղթում հեղինակը ընդգծեց, որ Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում կանայք կազմում են բնակչության շուրջ 51%-ը, սակայն ազգային խորհրդարանների անդամների շրջանում կանայք ընդամենը մոտ 23% են: Այս միջինացված ցուցանիշը թաքցնում է հսկայական խզումը ընդամենը չորս երկրների, որոնցում կանանց ներկայացվածությունը խորհրդարանում գերազանցում է 40%-ը (Անդորրա, Նիդերլանդներ, Ֆինլանդիա, Շվեդիա) և շատ ավելի մեծ թվով երկրների միջև, որտեղ այս ցուցանիշը չի գերազանցում 20%-ը, իսկ որոշ դեպքերում նաև՝ 10%-ը:

«Իմ գեկույցը նվիրված է ժողովրդավարական գործընթացներում առանցքային խաղացողներ համդիսացող կուսակցություններում գեներալային հավասարության ապահովման առաջավոր փորձին», - ասաց Մարիա Ստավրոսիտուն՝ նշելով, որ գոյություն չունի խորհրդարանում կանանց ներկայացվածությունը բարձրացնելու միասնական բանաձև, սա-

կայն առավել հաճախ պետությունների կողմից կիրառվող գործիքների շարքում օրենսդրական քվոտաներն են, որոնցով ընտրական ցուցակներում սահմանվում են կանանց ներկայացվածության նվազագույն տոկոսը, ինչպես նաև ֆինանսական կամ այլ խթաններ:

Նրա խոսքով՝ ընտրական քվոտաներ գոյություն ունեն Եվրոպայի խորհրդի 13 անդամ երկրներում, սակայն, բացի այդ, շուրջ 30 անդամ պետությունների կուսակցությունները կանայքին հիմունքներով մտցրել են գեներալային քվոտաներ՝ կանանց նվազագույն տոկոսը երաշխավորելու համար: Կուսակցությունները դիմել են բազմաթիվ այլ միջոցների՝ իրենց ներքին կառույցներում կանանց ակտիվ մասնակցությունն ապահովելու՝ առաջադրելով նրանց աչքի ընկնող և պատասխանատու պաշտոններում և սատարելով նրանց առաջխաղացմանը:

Նա նաև հիշեցրեց, որ կանանց ներկայացվածության հարցի նկատմամբ հետաքրքրությունը բարձրացնելու համար խորհրդարանական վեհաժողովը որոշում է ընդունել սահմանել գեներալային հավասարության մրցանակ այն կուսակցությունների համար, որոնք տարբեր միջոցներ և նախաձեռնություններ են հանդես բերում այս ոլորտում:

Ընդունված բանաձևում հղում է արվում 2010-ին ԵԱԿԿ/ԺՄԻԳ-ի և Վեներտիկի հանձնաժողովի հրապարակած «Քաղաքական կուսակցությունների գործունեության իրավական կարգավորման դեկլարացիա»-ը, որում պարունակվում են աշխատանքի արդյունավետ ձևերի և մեթոդների օրինակներ: Օրսանա Մուսայեյան

Վեհաժողովի ամբիոն

«Դեպի բարեկեցություն միակ ուղին անցնում է փրամարդկանց ու կանանց հավասարության միջով»

«Քաղաքական կուսակցությունները և կանանց քաղաքական ներկայացվածությունը» բանաձևի քննարկման ընթացքում հանդես եկավ Շվեդիայից պատգամավոր Մարիա Ստավրոսիտունը, որը կուսակցությունները պետք է գիտակցեն ցուցակում առաջինների շարքում կանանց ներկայացնելու անհրաժեշտությունը: «Ինչ-որ բան հեռավոր է օրենսդրությանը ամրագրել, իսկ ինչ-որ բան՝ ոչ: Մենք պետք է խրախուսենք կուսակցություններին կանանց առաջ մղելու», - ասաց շվեդ պատգամավորը: Կիպրոսի պատգամավոր Ստելլա Կիրիկիդեսը նշեց.

պոնեյան պատերազմին վերջ դնելու համար: Սակայն հուսով եմ, որ մենք ի գորու ենք լուծելու այս խնդիրը առանց արմատական միջոցների դիմելու»:

Նրա խոսքով՝ այս խնդիրը պետք է դիտարկվի ոչ միայն որպես կանանց հիմնահիմք: «Հիմնական տեղաշարժը պետք է տեղի ունենա կարծախախտում, որոնցով դատարարական են մեր երեխաները: Այս կարծախախտը ձևավորվում են վաղ տարիքում ՁԼՄ-ների և մեր քաղաքական ու քաղաքացիական հասարակության միջոցով: Պետք է լինի հստակ, նպատակաուղղված քաղաքականություն, որը նպատակ կանանց համար ընտանիքի և քաղաքական կարիերայի համատեղմանը», - ընդգծեց կիպրոսի պատգամավորը: Քննարկումներին մասնակցեց նաև Նորվեգիայից պատգամավոր Լիզ Քրիստինսենը, ով նշեց, որ իրենց պատվիրակությունն ամբողջությամբ աջակցում է կուսակցություններին ուղղված կոչին՝ ներմուծել գեներալային քվոտաներ:

«Նորվեգական աշխատավորական կուսակցությունում մենք 50:50 քվոտա ունենք իշխանության և կուսակցական կազմակերպության բոլոր մակարդակներում,

և այս կանոնի խախտումը կարող է անհրաժեշտության դեպքում հանգեցնել պատմամիջոցների: Քվոտան ուղղված է ոչ միայն կանանց իրավունքների պաշտպանությանը, այլ նաև քաղաքական որոշումների որակի բարձրացմանը՝ քաղաքականության մեջ կանանց կենսափորձի օգտագործման հաշվին», - նշեց նա:

Պատգամավորն առաջարկեց վերցնել խորհրդարանում կանանց ներկայացվածության «վատ ցուցանիշներով» երկրների ցուցակը և գուզախեռներ անցկացնել Համաշխարհային տնտեսական ֆորումի գեներալային խզման համաթվի հետ: «Մենք սերտ փոխադարձ կապ կհայտնաբերենք կանանց ներկայացվածության և բարեկեցության ու կյանքի պայմանների վարկանիշի միջև: Մենք հանդաված ենք, և պատմությունն ապացուցել է դա՝ դեպի բարեկեցություն և բարգավաճում միակ ուղին անցնում է ժողովրդավարության և տղամարդկանց ու կանանց համար հավասար պայմանների միջով: Հակառակ տեսակետը վաղ թե ուշ փակուղի կտանի»:

ԵՆԽՎ-ում հայաստանյան պատվիրակության անդամ Արփինե Հովհաննիսյանը մեզ հետ զրույցում ասաց, որ թեև այս բանաձևը քաղաքական օրակարգային այլ հարցերի համատեքստում փոքր-ինչ անուշադրության մատնակ է, բայց դա ամենևին էլ չի նշանակում, որ Հայաստանը կարևորություն չի տալիս այդ բանաձևին: Նրա խոսքով, բանաձևը, ըստ էության, մեկ անգամ ևս վերահաստատում է Եվրոպայի խորհրդի մոտեցումները քաղաքական

գործընթացներում կանանց մասնակցության վերաբերյալ:

«Բանաձևը ըստ էության երկու հարցարարում է պարունակում: Առաջին հատվածը ուղղված է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, որոնց կոչ է արվում ավելի արդյունավետ մեխանիզմներ ստեղծել կանանց ներգրավվածությունը քաղաքական գործընթացներում առավել բարձրացնելու համար: Ինչ վերաբերում է երկրորդ հարցարարմանը, ապա դրանով կարևորվում է կանանց ներգրավվածությունը հենց Եվրոպայի խորհրդի ներսում՝ իրենց մարմինների ընտրությունների ժամանակ», - նշեց պատգամավորը:

Արդյո՞ք բանաձևը որոշակի պարտավորություններ է սահմանում ու, մասնավորապես, Հայաստանին համար:

«Ոչ, որևէ պարտավորեցնող դրույք բանաձևը չի սահմանում, պարզապես երաշխավորում է, որ այն քայլերը, որոնք իրականացնում են տարբեր երկրներ, այդ թվում նաև՝ Հայաստանը (հիշեցնեմ Ընտրական օրենսգրքում գետեղված գեներալային քվոտան), իրականացվեն նույն եռանդով ու շարունակականությամբ: Կարծում եմ՝ պետք է քայլ առ քայլ գնալ, միանգամից ոչինչ հնարավոր չէ անել, որովհետև ցանկացած լավ գաղափար կարելի է փչացնել վատ կատարմամբ: Հետևաբար ստիճանական զարգացումը այն մոտեցումն է, որը, իմ խորին համոզմամբ, այստեղ կարող է լուծում հանդիսանալ», - իր մոտեցումները ներկայացրեց Արփինե Հովհաննիսյանը:

«Ձեռնարկել միջոցներ, որոնք հնարավորություն կտան կուսակցությունների կին անդամներին գուզակցելու քաղաքական գործունեությունը և ընտանեկան պարտականությունները, մասնավորապես, հնարավորություն ընձեռելով անվճար օգուտներ: նախադպրոցական հաստատությունների ծառայություններից կարևոր կուսակցական իրադարձությունների կամ ընտրական քարոզարշավների ժամանակ, և որքան հնարավոր է խուսափել երեկոյան և հանգստյան օրերին կուսակցական ժողովներ հրավիրելուց...» Թիվ 1898 (2012) բանաձևից

Կանայք՝ համայնքի ղեկին

Լյուդմիլա Պետրովա. «Կինը ե՛ր մեծ խնդիրներն է փնտռում, ե՛ր նրանք, որ փղամարդկանց աննշան են թվում»

Լյուդմիլա Պետրովան արդեն երրորդ անգամ ընտրվում է Արարատի մարզի Վերին Դվին համայնքի ղեկավար՝ գյուղապետ է 2004 թ.-ից: Վերջին անգամ վերընտրվել է անցյալ տարի: Համոզված է՝ կնոջ ղեկավար լինելը սերունդների բարեկեցության, զեղեցիկ ու բարգավաճ համայնքի գրավական է:

Ման դրան հաջորդած զարգացումները հարթ անվանել չի կարող: Համայնքի ղեկավարն այնքան վատ էր ընդունել իր առաջադրման փաստը, որ նույնիսկ դժվարանում էր թաքցնել իր վերաբերմունքը, իսկ քանի որ աշխատում էին նույն հիմնարկում, այդ ամենը ստիպված էր ամեն օր զգալ: Բայց, սառն է, կարևորը՝ համագյուղացիները լավ ընդունեցին առաջադրումն ու ընտրություններն էլ հաղթանակ բերեցին:

Րական վերաբերմունք ունեն, բոլորովին: Որպես ապացույց էլ նշեմ, որ իմ տեղակալը տղամարդ է, ավելին՝ ընտրություններում իմ մրցակից թեկնածուի քիմից էր, բայց քանի որ լավ մասնագետ է, խելացի ու բանիմաց, ընտրվելուց հետո անմիջապես առաջարկեցի այդ պաշտոնը:



Իմ հարցին ի պատասխան, թե արդյոք պատրաստ է չորրորդ անգամ ևս առաջադրվել, հստակ այդով հավելեց՝ եթե բնակիչները դա ցանկանան ու ինձ նորից աջակցեն, ապա անպայման նորից կառաջադրվեմ...

Լիա Խոջոյան



Մասնագիտությամբ ինժեներ է Այուդիբի մարզի Քարահունջ համայնքի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Լուսինե Ավետյանին գյուղապետարան տարավ ցանկությունը, որ իր երեք երեխաներն ավելի բարեկեցիկ պայմաններում մեծանան, սովորեն շեռուցվող դպրոցում և նորմալ կրթություն ստանան: Լինելով ուսուցչուհի և մասնագիտությամբ բերումով շփվելով քարահունջցիների հետ՝ Լուսինեն տեղյակ էր՝ որո՞նք են գյուղի խնդիրներն ու ինչն է անհանգստացնում նրանց:

Լուսինե Ավետյան. «Կնոջ ձեռքեր են դիպել գյուղին, ես այն փոխվել է»

Առաջին փորձը հաջողությամբ պսակվեց: 2002 թ. Լուսինեն ընտրվեց համայնքի ղեկավար: Առաջադրվել էին վեց տղամարդ, ես միակ կինն էի: Ընտրվել են առանց ծրագրի և նախընտրական քարոզարշավի: Նման երևույթ երևի առաջին անգամ է զբանջվում, երբ թեկնածուն առանց նախընտրական քարոզարշավի հաղթում է: Օգնեց այն, որ իմ ընտանիքին գյուղում շատ լավ էին ճանաչում: Ամուսինս անհատ ձեռներեց է, գյուղում խառնուրդ ունենք: Տեսնում էին, որ չունենում էին ձեռք ենք մեկնում, աջակցում և, կարելի է ասել, ընտանիքի անվան արդյունքում ձեռք բերեցի գյուղացիների վստահությունը, - ասում է Լուսինե Ավետյանը՝ շեշտելով, որ հետագայում արդեն իրեն ընդունում էին և ընտրում իր կատարած աշխատանքի համար:

որանից նեղվում էի, սակայն հետո հարմարվեցի, սովորական դարձավ: Հիմա մարզում կին գյուղապետների թիվն էլ է ավելացել: Սկզբում նույնիսկ հայացք-դիտողություններ էի նկատում, թե դու այստեղ ի՞նչ ես անում, բայց հիմա ամեն ինչ փոխվել է: Ես հաստատվել եմ ու ապացուցել, որ իրենցից վատ չեմ կատարում: Ավելին, շատ հաճախ այլ համայնքների տղամարդ ղեկավարներ գանգուլ են, թե Լուսինե չան, ես հարցն ո՞նց եք լուծել, կամ այս հարցի վերաբերյալ ո՞ւմ դիմեմ: Իմ տղամարդ գործընկերներին հատկապես զարմացրել է այն փաստը, որ մարզում գործող միջազգային բոլոր կազմակերպությունները Քարահունջում ներդրումներ են կատարել: Միշտ հարցնում են, թե Լուսինե, ո՞նց է ստացվում, որ կարողանում ես համագործակցել և քո ծրագրերն իրականացնել, - անցած ժամապարհն արդեն ժպիտով է հիշում Լուսինեն՝ հավելելով, որ դժվարությունները տրված են հաղթահարելու համար:

Հասմիկ Հարությունյան

Սեքսիզմ

«Կին պատգամավոր է, ասել է, էլի...»

- գործընկերները հաճախ են պատգամավոր Ձարուհի Փոստանջյանի հայտարարությունները մեկնաբանում՝ սեռային պատկանելությունից ելնելով: Օրենք նրա կին պատգամավոր լինելը հիշեց և շեշտեց ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը: Աժ վերջին քառօրյային հաջորդած ճեպագրույցների ժամին լրագրողները խնդրեցին նրան մեկնաբանել Ձարուհի Փոստանջյանի հայտարարությունը, որ «ժառանգության» առաջնորդ Բաֆֆի Հովհաննիսյանը Արևմտյան Հայաստանի, Արևելյան Հայաստանի, Արցախի և Ջավախքի հավաքական թեկնածուն է... Ի պատասխան Գալուստ Սահակյանը ասաց. «Կին պատգամավոր է, ասել ասել է, լավ է՝ հարևան երկրների մասին բան չի ասել...»

Հիշեցնենք, որ Ձարուհի Փոստանջյանի սեռային պատկանելությունը առաջին անգամ չէ, որ հակափաստարկի դեր է խաղում տղամարդ գործընկերների մեկնաբանություններում: Բոլորովին վերջերս ՀՀԿ խմբակցության անդամ Տիգրան Ուրիխանյանն իր հասցեին արված հայտարարությանն արծազանքելիս որոշեց հորդորել Ձարուհի Փոստանջյանին՝ «չդուրսերել հայ կնոջն ու պատգամավորին անվայել պահվածք»:

Թողարկումը հրատարակվել է ԵՊՀ Երեւանյան գրասենյակի ԵԼՎրաստանում Երեւանի Թագավորության ղեկավարության համատեղ աջակցությամբ

Բլից

Նարինե Մեսրոպյան. «Երկրի նախագահ որեւէ կնոջ չեմ պատկերացնում, իսկ Գյումրու քաղաքապետը՝ ինչո՞ւ ոչ»

Սեպտեմբերյան ՏԻՄ ընտրություններից հետո Գյումրու ավագանին ունեցավ ընդամենը մեկ կին անդամ՝ թիվ 19 միջնակարգ դպրոցի տնօրեն, մասնագիտությամբ ֆիզիկոս, ՀՀԿ-ական Նարինե Մեսրոպյանը: Բացի մասնագիտական ձեռքբերումներից, զբաղվել է նաև հասարակական գործունեությամբ՝ «Կրթության ասպարեզ» ՀԿ փոխնախագահն է: Ամուսնացած է, ունի մեկ դուստր և մեկ թոռնիկ: Ասում է՝ թեկնածուներն առաջադրել են՝ ընդառաջ գնալով ՀՀԿ որոշմամբ: Ընտրվելուց հետո միակ ու ամենամեծ ցանկությունն այն է, որ կարողանա օգտակար լինել սիրելի քաղաքին. «...Որ քաղաքը լինի շենացած, գյումրեցիները՝ լավատես ու վստահ զայիքի հանդեպ»:

ձագանքն այն էր, որ նրանք ինձ սատար կանգնեցին ընտրապայքարի ժամանակ: Ի՞նչ եք պատրաստվում փոխել Ձեր ներկայությամբ ու գործունեությամբ Գյումրուում: - Գուցե շատ լավատես եմ, բայց ուզում եմ, որ Գյումրին գավառական քաղաքից դառնա առավել բարեկեցիկ ու ժամանակակից քաղաք: - Գյումրին համարվում է «տղամարդկային» քաղաք, կարծրատիպերն էլ դեռևս գերիշխում են քաղաքային կառավարման մակարդակում: - Այո, իրավացի եք՝ Գյումրին համարվում է «տղամարդկային» քաղաք, բայց գյումրեցին նաև կնամեծար է (հունդրով՝ արժեքները ճիշտ է գնահատում), և ընտրապայքարի ժամանակ անձամբ ես նկատեցի ոգևորություն հասարակության մեջ: Կարծում եմ՝ գյումրեցին գրեթե ձեռքազատվել է կարծրատիպերից՝ սա իմ սուբյեկտիվ կարծիքն է: Ի դեպ, դրան նպաստել է նաև այն հանգամանքը, որ 1979-1988-ը Լեհիստանի քաղաքացի առաջին քարտուղարը եղել է բոլորի կողմից շատ սիրված և զնախադաս մի կին՝ Դոնարա Հարությունյանը, ով մինչև օրս էլ վայելում է ազգաբնակչության հարգանքը: Սա, կարծում եմ, խոսում է փաստ է: - Այնուամենայնիվ, սեպտեմբերյան ընտրություններից հետո Գյումրու ավագանիում Դուք միակ կինն եք, զգացե՞լ եք Ձեր նկատմամբ խտրական վերաբերմունք: Եվ արդյոք լսելի՞ է Ձեր ծայրը ավագանիում: - Գիտեք, միակ «խտրական» վերաբերմունքը, որ զգում եմ իմ նկատմամբ՝ լինելով միակ կինը ավագանիում, ընդգծված ուշադրությունն է: Ուշադրության կենտրոնում եմ, իմ կարծիքը հաշվի է առնվում: Գոհ եմ իմ գործընկերներից, և թող միշտ կանայք մնան «խտրականության» համդիպեն: - Պատկերացնո՞ւմ եք, որ մի օր Գյումրու քաղաքապետը և կամ Հայաստանի նախագահը կին դառնա: - Ճիշտն ասած՝ այս պահին որպես Հայաստանի նախագահ որևէ կնոջ չեմ պատկերացնում... (կատարում է՝ «Երևի ես չեմ լինի, դա համար»), բայց Գյումրու քաղաքապետ միգուցե կունենանք՝ ինչո՞ւ ոչ:

Ձորս տարի առաջ Շիրակի մարզի Ախուրիկ համայնքի ղեկավար ընտրվեց Վարդիթեր Գասպարյանը: Պաշտոնը նրան հեշտ չտրվեց: Պայքարեց ՀՀԿ-ի ու ԲՀԿ-ի ներկայացուցիչների դեմ: Սամուլն այդ օրերին գրեց. «Հզոր ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն անկուսակցական կին թեկնածուի դեմ»: Մինչ համայնքապետ ընտրվելը՝ 1979-ից աշխատել է ղեկավար մարմիններում ու միշտ զբաղեցրել պատասխանատու պաշտոններ: Աշխատելու զուգահեռ երեք երեխա է պահել-մեծացրել...

Վարդիթեր Գասպարյան. «Համայնքի բնակչի հոգսը դառնում է քունը, երբ լսում ես նրան...»

- Քաղաքականությունը դիվանագիտություն է, իսկ կինն ավելի դիվանագետ է, ավելի ճկուն ուղեղ ունի: Երբ կինը ղեկավարում է իր ընտանիքը, հարթելով բոլոր ծագած բարդությունները, ապա նա վատ ղեկավար պարզապես լինել չի կարող: - Դժվար չէ՞ արդյոք համայնքել մի ամբողջ գյուղ ու կնոջ խոսքը լսելի դարձնել, առավել ևս ավանդապահ ու նահապետական բարքերի պայմաններում: - Առաջին հերթին կինը պետք է մնա կանացի, և եթե կնոջ խոսքը տեղին ու ժամանակին է ասված, ապա գյուղը լսում է: Համայնքի բնակչի հոգսը դառնում է քունը այն պահից, երբ նրան լսում ես: Գուցե չես էլ կարող որանց բոլոր պահանջները բավարարել, բայց նա ցանկություն ունի լսված լինելու: - Արդյոք եղե՞լ են պահեր, որ ինքներդ Ձեզ ասած լինե՞ք՝ ինչո՞ւ մտաքաղաքականություն: - Անվեղձ՝ լինում են պահեր, երբ ուզում ես որպես կին ապրել, լինել ազատ ու այդքան շատ հոգսեր ուսերիդ չտանես, բայց դրանք սոսկ րոպեներ են, հարթահարում ես ու հիշում՝ որ քեզ չեն ստիպել, դու ես առաջադրվել...

Լիա Խոջոյան

Լիա Խոջոյան